ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:»

Սահմանադրության 84-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք:

2. Նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:»

Սույն նախագծով առաջարկվում է նվազագույն աշխատավարձի չափը սահմանել 100.000 ՀՀ դրամ: Սույն առաջարկի հիմքում դրված են մի շարք սոցիալ-տնտեսական հիմնավորումներ, մասնավորապես, նկատի ունենալով ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից՝ ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի հաշվակված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին և աղքատության մակարդակին վերաբերող տվյալները. Ըստ այդմ, 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով առկա են հետևյալ ցուցանիշները[1].

Պարենային զամբյուղի արժեքը	
Տարեկան	431 796.6 դրամ
ամսական	35 983.0 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	
Տարեկան	798 823.7 դրամ (գործակից 1.85)
ամսական	66 568.6 դրամ

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2019 թ. ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կողմից 5184 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով ունի հետևյալ պատկերը՝.

	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ	Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ
Պարենային զամբյուղի ամսական արժեքը	27 772.7 դրամ	30 927.4 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը	51 379.5 դրամ	57 215.7 դրամ (գործակից 1.85 1)

[1] https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

Իսկ արդեն ըստ ԱՎԿ հաջորդ վերաբերելի հրապարակման՝ 2-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 37 861 դրամ, սպառողական զամբյուղների արժեքը՝ 70 044 դրամ:

Ըստ ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվության 3-րդ եռամսյակային գրաֆիկի[2] փաստացի գնաճը 2021թ կազմել է 8.4 %, սպառողական գների ինդեքսը՝ 7.3 %, բնականոն գնաճը՝ 7.1%:

Միաժամանակ, 2022թ հունվարի 1-ից խմելու ջրի 1 խ/մ-ի գինը կթանկանա 20,47 դրամով, իսկ ՀԾԿՀ-ն չի բացառում, որ 2022 թ. փետրվարից Հայաստանում կրկին կբարձրանան էլեկտրաէներգիայի սակագները: Հարկ է նշել, որ աշխատավարձի ինդեքսավորման իրավական մեխանիզմի բացակայության պարագայում գնաճը էլ ավելի է բարդացնում COVID-19-ի և 44-օրյա պատերազմի արդյունքում ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մեր հայրենակիցների համար իրենց ամսական կարիքների պատշաճ կերպով հոգալու հնարավորությունը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև շեշտակիորեն բաձրացող աղքատության մակարդակը ինչ-որ կերպ մեղմելու անհրաժեշտությունը, հատկապես «աշխատող աղքատ» կատեգորիայի անթույլատրելիությունը՝ առաջարկվում է բարձրացնել նվազագույն ամսական աշխատավարձի չափը՝ այն սահմանելով 100.000 ՀՀ դրամ:

Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ ներկայացված նախագիծը համահունչ է նաև կառավարության ծրագրի նպատակադրումներին, որով ստանձնել են պարտավորություն «նվազագույն աշխատավարձը սահմանել 85.000 դրամ, վերացնել ծայրահեղ աղքատությունը»:

Հարկ է նշել, որ թեև նախագիծը իրենից ենթադրում է ծախսերի ավելացում, սակայն հարկ է նշել, որ աշխատավարձի բարձրացված մասը՝ 32000 ՀՀ դրամը, ծախսերի և դրանց արդյունքում ձևավորվող հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների միջոցով կրկին վերադառնալու է պետական բյուջե: Ավելի ճշգրիտ հաշվարկներ հնարավոր է իրականացնել միայն լիազոր մարմնի կողմից վարվող եկամտային հարկի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա:

[2] https://www.cba.am/am/SitePages/mp2021gt.aspx